ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայ-լեհական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2010թ. մարտի 12-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության մասին» համաձայնագրի:

Հանձնաժողովի հայկական կողմի նախագահն է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը:

Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 2010թ. հուլիսի 13-ին՝ Երևանում: Հանձնաժողովի վեցերորդ նիստը կայացել է 2018թ. փետրվարի 20-ին՝ Վարշավայում: Հանձնաժողովի հերթական՝ յոթերորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: